բայց բաւական ժամանակ կ'ուզի, որ հասնի Տփխիսին։ 1888 թուին այցելութեան եկին Բաղուին Օգոստափառ Մեծ Կայսրն ամենայն ռուսաց Աղէքսանդր Գ. (հոկտ. 9 – 11) և հիմն դրաւ ռուսաց նոր մեծ եկեղեցւոյն յանուն սրբոյն Աղէքսանդրի Նեւսցւոյ ի 10 հոկտեմբերի, և Վեհափառ Տ. Մակար Կաթուղիկոսն ամենայն հայոց (հոկտ. 22 – 26) և օրհնեց հիմն հայոց նոր փառաւոր ուսումնարանի ի 23 հոկտ. որոյ հիման մէջ արեւելեան աջ անկիւնում դրուեց մարմարոնեայ քարի վրայ արձանագիրը ուսումնարանի հիմնարկութեան, որ ըստ այսմ.

«Յամի Տեառն 1888, և Հայկական 4380 ի 23 հոկտեմ. ի կայսերութեան ամենայն ռուսաց Աղէքսանդր Գ. ի և ի կաթուղիկոսութեան ամենայն հայոց Տ. Տ. Մակարայ, որոյ ի ներկայութեան, ի ձեռն Առաջնորդի թեմին հայոց Շամախւոյ Տ. Մեսրոպի Արքեպիսկոպոսի Սմբատեանց, օրհնեցաւ հիմն ազգային ուսումնարանիս, որ կառուցաւ արդեամբք Բաղուայ Հայ հասարակութեան և ջանիւք բարձրագոյնս հաստատեալ յանուն սրբոյն Գրիգորի Լուսաւորչին Մարդասիրական Ընկերութեան հայոց Բաղու քաղաքիս, ի 25երդ տարեդարձի նոյն Ընկերութեան՝ առ նախագահութեամբ խորհրդոյ նորին Քրիստափորի Անտոնեանց»։

Վեհափառ Կաթուղիկոսը ի 25 նոյն հոկտ օրհնեց և ազգային Աղքատանոցն, որոյ շինութեան արձանագիրն ըստ այսմ.

«Յամի Տեառն 1888. և Հայկական 1380. ի Կայսերութեան ամենայն ռուսաց Գ. Աղէքսանդրի Վեհափառ Տ. Տ. Մակար Կաթուղիկոսն ամենայն